ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մ.ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԻՆԱ ՏԻԳՐԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ՎԱԽԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ՆՈՐՄԱՅՈՒՄ ԵՎ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**ԺԹ.00.04 - «Բժշկական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան- 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Հ. Միքայելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բժշկական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր Ս. Հ. Սուքիասյան

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Է.Ա.Զաքարյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի նոյեմբերի 10-ին, ժամը 15.30-ին Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 028 Թերապիա մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ ք.Երևան 0025, Կորյունի 2

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ., հոկտեմբերի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ բժշկական գիտությունների
թեկնածու Լ.Գ.Թունյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արդիականությունը: Բժշկական հոգեբանության ոլորտում կարևորվում և առանձնացվում է բոլոր ժամանակների համար արդիական՝ մանկական վախերի հիմնախնդիրը, հատկապես դրանց առաջացման և դինամիկայի առանձնահատկությունների ուսումնասիրման տեսանկյունից:

Հաշվի առնելով նախադպրոցական տարիքում տեղի ունեցող նշանակալի փոփոխությունները, որոնք ներառում են երեխայի ճանաչողական, հաղորդակցման, հուզական ոլորտները, ինչպես նաև նախադպրոցական տարիքում վախերի զարգացման որոշակի օրինաչափությունները, այս տարիքում վախերի հաղթահարմանն ուղղված արդյունավետ մոդելների ձևավորումը և կիրառումը առանձնահատուկ կարևոր նշանակություն են ձեռք բերում:

Հոգեբանական գիտությունը կուտակել է երեխաների նյարդային, հոգեկան և մարմնական խանգարումների հոգեթերապիայի նպատակով բազմազան մեթոդների կիրառման բավական հարուստ փորձ այնպիսի հեղինակների միջոցով, ինչպիսիք են Զ.Ֆրոյդը, Ա.ֆրեյդը, Վ.Էկսլայնը, Ն.Յ.Սեմագոն, Ա.Ս.Սպիվակովսկայան, Ի.Ի.Մամայչուկը, Ա.Ի.Զախարովը և այլք, սակայն առկա չեն զարգացման խնդիրներով երեխաների համար մշակված և փորձարարորեն հիմնավորված վախերի հաղթահարման համակարգված ծրագրեր, իսկ նորմալ զարգացում ունեցող երեխաների վախերի հաղթահարման նպատակով կիրառվող որոշ մեթոդներ հաճախ ցածր արդյունավետություն են ունենում զարգացման խնդիրներ ունեցող երեխաների վախերի հաղթահարման գործընթացում: Այս խնդիրը ևս մենք համարում ենք խիստ արդիական:

Զարգացման խանգարումն արտացոլվում է երեխայի հուզական ոլորտում ևս, ինչի արդյունքում անգամ տվյալ տարիքի շրջանակներում՝ տարիքին բնորոշ վախերի դրսևորումներն ունենում են իրենց առանձնահատկությունները, ինչպես արտահայտվածության ինտենսիվության և բնույթի, այնպես էլ հաղթահարման տեսանկյունից: Այս հանգամանքը ոչ միշտ է հաշվի առնվում զարգացման խանգարումներ ունեցող երեխաների վախերի հաղթահարման աշխատանքների կազմակերպման ընթացքում, ինչն էլ իր հերթին նվազեցնում է իրականացվող համապատասխան աշխատանքների արդյունավետությունը: Վերը նշված հանգամանքները որոշում են հիմնահարցի արդիականությունը, նրա տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության արդիականությունն ակնհայտ է դարձնում նաև այն փաստը, որ ներկայումս հոգեբանական կենտրոններում, ներառական կրթություն իրականացնող նախադպրոցական հաստատություններում աշխատող հոգեբանների առջև խնդիր է ծագում ստեղծել վախերի հաղթահարման համապատասխան մոտեցումներ, որոնք հնարավոր կլինի արդյունավետորեն կիրառել ոչ միայն նորմալ զարգացում ունեցող երեխաների հետ իրականցվող աշխատանքներում, այլև՝ զարգացման խնդիրների առկայության դեպքում: Մինչդեռ, այդ մասնագետների համար մինչ օրս մշակված չեն զարգացման խնդիրներ ունեցող երեխաների վախերի հաղթահարմանն ուղղված ծրագրեր,

մեթոդական ուղեցույցներ, ինչն էլ իր հերթին ավելի է բարդացնում այս երեխաների հետ աշխատող մասնագետների աշխատանքը:

Հիմք ընդունելով վերոհիշյալը կարող ենք նշել, որ ինչպես նորմալ զարգացում ունեցող, այնպես էլ զարգացման տարբեր խնդիրներ ունեցող երեխաների վախերի առանձնահատկությունները հաշվի առնող մեթոդների ու միջոցների մշակումը, փորձարարական ճանապարհով դրանց արդյունավետության հիմնավորումն այսօր արդիական է և ունի կարևոր տեսական ու գործնական նշանակություն:

Այս հարցերի լուծմանն էլ ուղղված է մեր հետազոտությունը:

Հետազոտության նպատակն է բացահայտել նորմալ զարգացում, մտավոր հետամնացություն և աուտիզմ ունեցող երեխաների վախերի առանձնահատկությունները և մշակել վախերի հաղթահարման ծրագիր:

Հետազոտության օբյեկտը նորմալ զարգացում և զարգացման խանգարումներ, մասնավորապես թեթև մտավոր հետամնացություն ունեցող և աուտիզմ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի հաղթահարման գործընթացն է:

Հետազոտության առարկան նորմալ զարգացում և զարգացման խանգարումներ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի հաղթահարման միջոցները, պայմանները, մեթոդական մոտեցումներն ու մոդելներն են:

Հետազոտության վարկածը. ենթադրվում է, որ մտավոր հետամնացություն և աուտիզմ ունեցող երեխաների կլինիկական պատկերներն ունեն բևեռային բնույթ, մինչդեռ նորման գտնվում է սրանց մեջտեղում, ինչն էլ արտացոլվում է երեխաների վախերի յուրահատկություններում և դրանց հաղթահարման գործընթացում: Հետևաբար, նշված երեք խմբերում պահանջվում է թերապիայի տարբերակված մոտեցում:

Հետազոտության խնդիրները: Վերը նշված նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել ու վերլուծել մասնագիտական գրականության մեջ և գործնականում առկա ժամանակակից մոտեցումները՝ հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ:
2. Բացահայտել վախի յուրահատկությունները հետազոտվող երեք խմբերում:
3. Ուսումնասիրել և վերլուծել նախադպրոցական տարիքի երեխաների ծնողների վերաբերմունքը երեխաների վախերի նկատմամբ, բացահայտել վախերի դրսևորման և դրանց հաղթահարման վերաբերյալ ծնողների իրազեկվածության մակարդակը:
4. Մշակել նորմալ զարգացում և զարգացման խանգարումներ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի հաղթահարման ծրագիր, և փորձարարությամբ հիմնավորել դրա կիրառման արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել հոգեկանի զարգացման բնույթի վերաբերյալ գիտական դրույթներն ու սկզբունքները, յուրաքանչյուր

պաթոլոգիայի նկատմամբ անհատական մոտեցման, ինչպես նաև մտավոր հետամնացության և աուտիզմի կլինիկական պատկերների բևեռայնության սկզբունքները (Р. Штайнер, В. Хольцапфель), դետերմինիզմի սկզբունքը (Л.С. Выготский, С.Л. Рубинштейн և այլք), որակական վերլուծության սկզբունքը (А.Н Леонтьев), համակարգայնության սկզբունքը (В.В. Лебединский, О.С.Никольская, Е.Р. Баенская, М.М. Либлинг, Лебединская К. С., Немировская С.Д., Лукашева И. Д. Eric J.Mash,Russel A.Berkly և այլք):

Հետազոտության մեթոդները: Ատենախոսության մեջ առաջադրված հիմնախնդրի լուծման նպատակով օգտագործվել են հետևյալ մեթոդները.

- հիմնախնդրին վերաբերող գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն,
- հետազոտվողների բժշկական փաստաթղթերի և անհատական զարգացման ծրագրերի ուսումնասիրություն,
- նախադպրոցական հաստատությունների հոգեբանների աշխատանքային փորձի ընդհանրացում,
- հոգեբանական հետազոտման էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, զրույց, անկետավորում, թեստավորում
- մաթեմատիկական վիճակագրություն

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ

1. առաջին անգամ փորձ է արվել ուսումնասիրել և համեմատական վերլուծության ենթարկել նորմալ զարգացում ունեցող, մտավոր հետամնացություն ունեցող և աուտիզմ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի յուրահատկությունները՝ դրանց բևեռայնության տեսանկյունից:
2. Տրվել է ամբողջական պատկերացում մանկական վախերի դասակարգման վերաբերյալ, և արդեն գոյություն ունեցող դասակարգումների հիման վրա ձևավորվել է վախերի աշխատանքային դասակարգում, որը ներառում է.
   - վախեր ըստ ինտենսիվության (թույլ, միջին, ուժեղ)
   - վախեր ըստ ախտաբանական բաղադրիչի (գերարժեքային, զառանցանքային, չտարբերակված, կպչուն և այլն)
   - վախեր ըստ թեմատիկայի (մթության վախ, միայնակության վախ, մահվան վախ և այլն)
   - վախեր ըստ օբյեկտի առկայության
   - վախեր ըստ ծագման (սեփական փորձի վրա հիմնված, ներշնչված և այլն):
3. Մշակվել և փորձարկվել է նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման հեղինակային ծրագիր:

Ատենախոսության տեսական նշանակությունը: Հետազոտության ընթացքում կատարված տեսական ընդհանրացումները և իրականացված գիտափորձի արդյունքները թույլ են տալիս բացահայտել նորմալ զարգացում և զարգացման խանգարումներ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի առանձնահատկությունները՝ դրանց ինտենսիվության, ախտաբանական բաղադրիչի, թեմատիկայի, օբյեկտի առկայության ու ծագման

տեսանկյունից, և հիմնավորել դրանց հաղթահարման գործընթացների առանձնահատկությունները: Ատենախոսության նյութերը հարստացնում են հատուկ հոգեբանությունը և հատուկ մանկավարժությունը վախերի հաղթահարման նոր մոտեցումներին, մեթոդներին վերաբերող տվյալներով և փորձարարության արդյունքներով:

Աշխատանքի գործնական նշանակությունն այն է, որ մշակվել և գործնկանում ներդրվել է «Նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման ծրագիրը», որն ուղղված է ինչպես նորմալ զարգացում, այնպես էլ զարգացման խանգարումներ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի հաղթահարմանը:

Հետազոտության իրականացման փուլերը

Առաջին փուլում (2009-2011թթ.) ուսումնասիրվել է մասնագիտական գիտամեթոդական գրականությունը, նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման նպատակներով իրականացվող հոգեբանական աշխատանքները՝ նախադպրոցական հաստատություններում և նախադպրոցական տարիքի երեխաների հետ հոգեբանական աշխատանքներ իրականացնող կենտրոններում, ուսումնասիրվել են հետազոտվողների բժշկական փաստաթղթերը, անհատական քարտերը, գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացությունները, անհատական զարգացման ծրագրերը:

Երկրորդ փուլում (2011-2012թթ.) նախնական ուսումնասիրությունների հիման վրա ընտրվել են տագնապայնության և վախերի ախտորոշման մեթոդիկաներն ու թեստերը: Ընտրվել ու համակարգվել են մանկական վախերի հաղթահարմանն ուղղված հոգեբանական տեխնիկանները, խաղերն ու վարժությունները, որոնց հիման վրա էլ ձևավորվել է «Նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման ծրագիրը», որոշվել ու ճշգրտվել են հետազոտության սկզբնական դրույթները, վարկածը, ձևավորվել են խնդիրները, կատարելագործվել է մեթոդիկան:

Երրորդ փուլում (2012-2014թթ.) անցկացվել են մի շարք նպատակաուղղված հետազոտություններ՝ արձանագրող և ձևավորող գիտափորձեր: Իրականցվել է նորմայում և ախտաբանության մեջ դրսևորվող վախերի հիմնախնդրի վերաբերյալ մասնագետների մոտեցումների և իրազեկության բացահայտմանն ուղղված հետազոտություն, որի նպատակն էր պարզել, թե երեխաների հետ աշխատող հոգեբաններն ինչպիսի ախտորոշիչ մեթոդներ են կիրառում նորմալ և ախտաբանական զարգացում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի ախտորոշման նպատակով և ինչպիսի մեթոդներ են կիրառում վախերի հաղթահարմանն ուղղված աշխատանքներում: Այս փուլում իրականացվել է նաև վախերի հիմնախնդրի վերաբերյալ ծնողների իրազեկության բացահայտմանն ուղղված հետազոտություն:

Չորրորդ փուլում (2014-2015թթ.) ամփոփվել են հետազոտության արդյունքները, վերլուծվել են արձանագրող և ձևավորող գիտափորձերի արդյունքները, ներկայացվել է եզրակացությունը, հավելվածի նյութերը, ինչի հիման վրա էլ պատրաստվել է ատենախոսության տեքստային ձևավորումը:

Հետազոտության բազա են հանդիսացել Մանկական զարգացման հիմնադրամի մանկական կենտրոնը, «Արև» զարգացման կենտրոնը, Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի դպրոց-պարտեզը, Երևանի թիվ 78 և թիվ 109, Թալինի թիվ 3 և Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի թիվ 2 ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները՝

1. իրականացված պիլոտաժային հետազոտության արդյունքների համաձայն, նորմալ զարգացում ունեցող նախադպրոցականների վախերի ախտորոշմանն ուղղված մեթոդները արդյունավետ չեն զարգացման խանգարումներ ունեցող երեխաների վախերի ախտորոշման համար, ուստի, այս դեպքում օժանդակ ախտորոշիչ մեթոդների կիրառման անհրաժեշտություն է ծագում:

2. Նորմալ զարգացում, թեթև մտավոր հետամնացություն և աուտիզմ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերը տարբերվում են իրենց ծագմամբ, ախտաբանական բաղադրիչով, ինտենսիվությամբ, թեմատիկայով և օբյեկտներով:

3. Մեր կողմից մշակված «Նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման ծրագիրը» հաշվի է առնում վերոնշյալ առանձնահատկությունները և նպաստում նորմալ զարգացում, թեթև մտավոր հետամնացություն և աուտիզմ ունեցող նախադպրոցականների վախերի հաղթահարմանը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են հետազոտված համակազմի ընդգրկուն քանակական կազմով, հետազոտման ժամանակակից մեթոդների կիրառմամբ, փաստացի նյութի մանրամասն մշակմամբ և հետազոտության արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ, մաթեմատիկական վիճակագրությամբ:

Հետազոտության տեսական և գործնական դրույթների հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովված են նաև հրատարակված նյութերի քանակով, հետազոտության արդյունքների քննարկումներով և ելույթներով:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է Երևանի Պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական հոգեբանության ամբիոնում: Ատենախոսությունը քննարկվել է ՀՊՄՀ Հատուկ կրթության ֆակուլտետի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնում: Ատենախոսության նյութերը ներկայացվել են հանրապետական, միջազգային, բուհական և միջբուհական գիտաժողովներում, որոնք նվիրված էին հոգեբանության արդի հիմնախնդիրներին:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը ներկայացված է 190 համակարգչային էջում: Այն կազմված է ներածությունից, 4 գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության տեքստը պարունակում է 13 աղյուսակ, 9 գծապատկեր: Ատենախոսությանը կից ներկայացված է 8 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ ներկայացված են հետազոտության արդիականությունը, նպատակը, օբյեկտը, առարկան, հիմնական խնդիրները, գիտական վարկածը, հետազոտության մեթոդաբանական հիմքերն ու մեթոդները, մշակվածության աստիճանը, հետազոտության նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության բազան, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Առաջին գլուխը՝ **«Վախ» երևույթը՝որպես հետազոտության առարկա»,** բաղկացած է չորս ենթագլխից:

1.1«Վախ» հասկացության էությունը և բնութագիրը» ենթագլուխը խնդրո առարկային առնչվող հայեցակարգային որոշ ընդհանուր, ինչպես իրար լրացնող, այնպես էլ հակադրվող մոտեցումների վերլուծությանն է նվիրված: Վերլուծվել և ներկայացվել են «Վախ» հասկացության փիլիսոփայական և հոգեբանական ասպեկտները:

1.2 «Վախերի տեսակները և դասակարգումը» ենթագլխում ներակայացվել են հույզերի հոգեբանության և կլինիկական հոգեբանության մեջ գոյություն ունեցող վախերի դասակարգումները: Հաշվի առնելով վախերի տարիքային և ախտաբանական դրսևորումների տարբերակման կարևորությունը, այս ենթագլխում հատուկ ուշադրություն է հատկացվել վախի ախտաբանական դրսևորումներին, դրանց առաջացման պատճառներին, դիտարկելով ինչպես դրանց դրսևորման տարբեր ձևերն ու ախտանիշները, այնպես էլ հնարավոր հետևանքները: Կարևորելով այն հանգամանքը, որ տարբեր դասակարգումներ վախերը դասակարգելիս ելնում են մի շարք այնպիսի չափանիշներից, ինչպիսիք են վախերի ծագումը, դրանց թեմատիկան, օբյեկտի առկայությունը կամ բացակայությունը, ախտաբանական բաղադրիչը, դրսևորման ինտենսիվությունը, և հիմք ընդունելով վերը նշվածը, մեր կողմից առանձնացվել և այս ենթագլխում ներկայացվել է վախերի աշխատանքային դասակարգում, որը ներառում է վախերի հետևյալ տեսակները.

- ըստ ինտենսիվության
- ըստ ախտաբանական բաղադրիչի
- ըստ թեմատիկայի
- ըստ օբյեկտի առկայության
- ըստ ծագման:

1.3 «Վախ հասկացությունը և դրա մեկնաբանումը հոգեբանական տարբեր դպրոցների մոտեցումներում» ենթագլխում վերլուծվել և մեկնաբանվել է հոգեվերլուծական, բիհևիորիստական, էքզիստենցիալ և գեշտալտ հոգեբանության մեջ վախ հասկացության ընկալումը: Ուշադրություն է հատկացվել հոգեբանական տարբեր ուղղությունների մոտեցումներում վախերի ծագման և զարգացման դինամիկայի և հոգեգենեզի պատճառների մեկնաբանմանը: Այդ մեկնաբանությունները հիմնականում սահմանափակվում են վախերի առաջացման օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառների առանձնացմամբ, չշեշտադրելով այդ գործոնների փոխազդեցությունը և վախի մեկնաբանումը՝ վախ առաջացնող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների

համադրման շրջանակներում: Վախի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները վերջիններս դիտարկում են դրանց քարացած վիճակում:

1.4 «Վախերի առաջացման պատճառներն ու գործառույթները» ենթագլխում վերլուծվել և մեկնաբանվել են վախի գործառույթները, դրանց ու վախ առաջացնող պատճառների միջև գոյություն ունեցող սերտ կապը, վերլուծվել և ներկայացվել են վախերի առաջացման ինչպես սուբյեկտիվ (դրդապատճառներ, հուզակամային կայունություն և այլն), այնպես էլ օբյեկտիվ բնույթ (իրավիճակի առանձնահատկություններ, խնդրի բարդություն, բազմաթիվ խոչընդոտներ և այլն) կրող պատճառները:

Կարևորվել է այն հանգամանքը, որ տարբեր վախերի առաջացման պատճառ կարող են դառնալ նաև երեխայի զարգացման խնդիրները, ընդ որում զարգացման խնդիրներ ունեցող երեխաների վախերն ունեն իրենց դրսևորման առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են զարգացման խանգարման տեսակով ու բնույթով:

Երկրորդ՝ **«Մանկական վախերի ձևավորման դինամիկայի վերլուծություն»** գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

2.1 «Վախերի ձևավորման անձնային և իրավիճակային գործոնները» ենթագլխում վերլուծվել և առանձնացվել են մի շարք այնպիսի գործոններ, ինչպիսիք են ծնող-երեխա փոխհարաբերությունները, ընտանիքում տիրող հոգեբանական մթնոլորտը, ծնողների կողմից կիրառվող դաստիարակության ոճը, ծնողների սոցիալական կարգավիճակը և այլն, «տագնապայնություն» ու «վախ» հասկացությունների կապի համատեքստում պարզաբանվել է դրանց դերը երեխայի տագնապայնության բարձրացման և վախերի առաջացման հարցում՝ տարիքային զարգացման տարբեր փուլերում:

2.2 «Վախերի տարիքային դինամիկան՝ որպես անձնային և իրավիճակային գործոնների փոխազդեցություն» ենթագլխում անձնային և իրավիճակային գործոնները ներկայացվել են տարիքային զարգացման համատեքստում և վերլուծվել է դրանց փոխազդեցությունը, մեկնաբանվել է այն, որ երեխայի զարգացման յուրաքանչյուր փուլում այդ գործոններից յուրաքանչյուրը տարբեր կերպ է ներգործում երեխայի վրա և ունենում տարբեր նշանակություն ոչ միայն վախերի ձևավորման, այլև առհասարակ, երեխայի զարգացման հարցում: Վերլուծվել և ներկայացվել են տարիքային տարբեր փուլերում այս գործոնների փոխազդեցության արդյունքում առաջացող վախերի յուրահատկությունները, ուշադրություն է հատկացվել տարիքային նորագոյացությունների և վախերի տարիքային դինամիկայի միջև գոյություն ունեցող կապի վերլուծությանը:

2.3 «Մտավոր հետամնացություն ունեցող և աուտիզմ ունեցող երեխաների հուզական ոլորտի առանձնահատկությունները» ենթագլխում մտավոր հետամնացություն և աուտիզմ ունեցող երեխաների հոգեբանական բնութագրերը ներկայացնելիս հատուկ ուշադրություն է հատկացվել հուզական ոլորտի առանձնահատկությունների մեկնաբանմանն ու պարզաբանմանը: Այս համատեքստում կարևորվել է այն, որ մտավոր հետամնացություն և աուտիզմ ունեցող երեխաների հույզերի առանձնահատկություններն արտացոլվում են նաև նրանց վախերում՝ պայմանավորելով վերջիններիս առաջացման և դրսևորման

առանձնահատկությունները: Դրանք կարևոր դեր են խաղում զարգացման այս խնդիրներն ունեցող երեխաների վախերի ինչպես բացահայտման, այնպես էլ՝ հաղթահարման առանձնահատկությունների տեսանկյունից:

2.4.«Նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման ուղիները» ենթագլխում ներկայացվել են նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման նպատակով կիրառվող հոգեբանական մեթոդները: Ինչպես նորմալ զարգացում ունեցող, այնպես էլ զարգացման տարբեր խանգարումներ ունեցող մեծահասակների և երեխաների հետ իրականացվող հոգեբանական աշխատանքներում հաճախ են կիրառվում հատկապես արտթերապիայի մեթոդները: Վախերի հաղթահարման նպատակով կիրառվում են արտթերապիայի գրեթե բոլոր ուղղությունները, սակայն հաշվի առնելով ինչպես տարիքային, այնպես էլ ախտաբանական բնույթի վախերի հաղթահարման գործընթացում կիրառվող ընդհանուր մեթոդները, առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման գործընթացում նկարչական թերապիայի, խաղային թերապիայի և երաժշտաթերապիա կիրառման յուրահատկություններին:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Նախադպրոցական տարիքում նորմայում և ախտաբանության մեջ դրսևորվող վախերի հետազոտություն»** բաղկացած է հինգ ենթագլխից:

3.1-«Հետազոտության հիմնական ուղղվածությունը, խնդիրները, մեթոդները և կազմակերպումը» ենթագլխում ներկայացված են հետազոտության տեսական և փորձարարական մեթոդները, իրականացված արձանագրող և ձևավորող գիտափորձերի հիմնական ուղղվածությունը և կազմակերպման ընթացքը, հետազոտության մասնակիցների համակազմը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են Ա.Ի.Զախարովի և Մ.Ա.Պանֆիլովայի «Վախերը տնակներում» մեթոդիկան, Ա.Ի.Զախարովի «Իմ վախերը» պրոյեկտիվ մեթոդիկան, Գ.Պ.Լավրենտևայի և Տ.Մ.Տիտարենկոյի տագնապայնության մակարդակի գնահատման հարցաշարը,Պ.Տեմպլի, Մ.Դորկի և Վ.Ամենի կողմից մշակված տագնապայնության թեստը, երեխաների վախերի բացահայտման նպատակով ծնողների և երեխաների հետ աշխատող մասնագետների համար մեր կողմից մշակված հարցաշարերը:

3.2- «Նորմայում և ախտաբանության մեջ դրսևորվող վախերի հիմնախնդրի վերաբերյալ մասնագետների և ծնողների իրազեկության վերլուծություն» ենթագլխում ներկայացվել են իրականացված սոցիալ-հոգեբանական հարցման արդյունքները, որի միջոցով պարզել ենք երեխաների հետ աշխատող մասնագետների և ծնողների իրազեկվածությունը նորմայում և ախտաբանության մեջ վախերի դրսևորման առանձնահատկությունների, ախտորոշման և հաղթահարման նպատակով իրականացվող աշխատանքների վերաբերյալ: Հարցմանը մասնակցել են 210 հետազոտվողներ, որոնցից 180-ը՝ ծնողեր (85,7%), 30-ը՝ (14,3%) երեխաների հետ աշխատող հոգեբաններ:

Ներկայացվել են ուսումնասիրվող հիմնախնդրի հետ կապված՝մեզ հետաքրքրող մի շարք հարցեր, որոնք անմիջական կապ ունեն վախերի հաղթահարման գործընթացի հետ: Մասնավորապես, մեզ հետաքրքրում էր, թե

ըստ հարցվողների հիմնականում ինչպիսի՞ վախեր են բնորոշ մտավոր հետամնացություն և աուտիզմ ունեցող երեխաներին, ինչպե՞ս և ի՞նչ իրավիճակներում են դրանք դրսևորվում, ի՞նչ մասնագետներ են սովորաբար աշխատում վախերի ախտորոշման և հաղթահարման ուղղությամբ, ի՞նչ մեթոդներ են կիրառվում այդ նպատակով, ինչպիսի՞ն է այդ աշխատանքների արդյունավետությունը:

Ինչպես ցույց տվեց մեր հետազոտությունը, երեխաների հետ աշխատող մասնագետները այս խնդրի հետ կապված լուրջ դժվարություններ են ունենում, քանզի նորմալ զարգացում ունեցող երեխաների վախերի ախտորոշիչ և հաղթահարման մեթոդները հաշվի չեն առնում զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ճանաչողական և հուզական ոլորտների, նրանց ինքնաընկալման, արտաքին աշխարհի հետ փոխհարաբերությունների յուրահատկությունները: Այս հանգամանքը կարևորվել է մեր կողմից և հիմք հանդիսացել հետազոտության խնդիրների սահմանման համար:

3.3- «Նորմալ զարգացում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի դրսևորման առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացվել են նորմալ զարգացում ունեցող երեխաների վախերի առանձնահատկությունները:

Արձանագրող գիտափորձի արդյունքներում արտացոլվում էր այն փաստը, որ նորմալ զարգացում ունեցող երեխաների վախերի առաջացումը հիմնականում պայմանավորված է վախերի դրսևորման տարիքային օրինաչափություններով, սակայն որոշ դեպքերում, երբ վախերն առաջանում են կամ սրվում երեխայի կյանքում տեղի ունեցած այս կամ այն հոգեցունց իրադարձության արդյունքում կամ բարձր տագնապայնության ֆոնի առկայության հետևանքով, դրանց դրսևորումները սկսում են կրել ևնրոտիկ բնույթ: Վախերի թեմատիկան ուղղակիորեն կապված է երեխայի տարիքային զարգացման հետ և արտացոլվում է վախերի տարիքային դինամիկայում: Վախերի ինտենսիվության տեսանկյունից նորմալ զարգացում ունեցող երեխաների մոտ որոշակի օրինաչափություն չի դիտարկվում: Հետազոտվողների այս խմբում վախի ինտենսիվության ցուցիչների դրսևորման դեպքում առավել հաճախ դիտարկվում են այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են քրտնարտադրության ուժգնացումը, սրտխփոցների հաճախականացումը, դեմքի դժգունումը կամ շառագունումը, սակայն որոշ դեպքերում վախը կարող է դրսևորվել նաև ճիչով, ձեռքերում առաջացող դողով, սրտխառնոցով: Ինչ վերաբերում է վախի օբյեկտի առկայությանը, ապա նորմալ զարգացում ունեցող երեխաների վախերն ունեն կոնկրետ օբյեկտներ, որոնք կայուն են երեխայի տարիքային զարգացման որոշակի փուլում:

Հետազոտված երեխաների զարգացման առանձնահատկությունների և վախերի մակարդակի միջև հավաստի կապի մասին են վկայում նաև իրականացված վիճակագրական հետազոտության արդյունքները (p=0,01):

3.4 «Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի դրսևորման առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացվել են հետազոտության մեջ ընդգրկված թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի դրսևորման յուրահատկությունները:

Ոչ բավարար ինտելեկտուալ զարգացման հետևանքով հուզական ոլորտի անբավարար զարգացումը հստակորեն արտացոլվում է նաև թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի քանակական և որակական բնութագրերում: Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների վախերն առանձնանում են իրենց թույլ ինտենսիվությամբ, մակերեսայնությամբ, ուղղակիորեն կապված են երեխայի անձնական կենսափորձի հետ, ախտաբանական բաղադրիչի տեսանկյունից տարբերակված չեն: Մեր կողմից հետազոտված նախադպրոցական տարիքի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մի շարք վախեր, ըստ թեմատիկայի բնորոշ են երեխայի զարգացման ավելի վաղ փուլերին:

Իրականացված վիճակագրական հետազոտությունն ախտաբանական այս խմբի զարգացման առանձնահատկությունների և վախերի մակարդակի միջև արձանագրել է հավաստի կապ (p=0,01):

3.5 ենթագլխում, որը վերնագրված է **«Աուտիզմ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի դրսևորման առանձնահատկությունները»**, ներկայացվել են աուտիզմ ունեցող երեխաների վախերի յուրահատկությունները՝ դրանց թեմատիկայի, ինտենսիվության, ծագման, ախտաբանական բաղադրիչի և օբյեկտի առկայության տեսանկյունից: Ի տարբերություն նորմալ զարգացում և մտավոր հետամնացություն ունեցող երեխաների, աուտիզմ ունեցող երեխաների վախերի առաջացման պատճառները կարող են անհասկանալի և անհայտ մնալ շրջապատողների համար, դրսևորվել անգամ հարաբերականորեն չեզոք իրավիճակներում, իսկ վախի արտաքին դրսևորումների աղքատիկությունը կամ անհամապատասխանությունը կոնկրետ իրավիճակին, ըստ մեզ կարող է հանդես գալ որպես մեկուսացման մեխանիզմի արդյունք՝ չարտացոլելով երեխայի կողմից ապրվող վախի իրական ուժգնությունը: Աուտիզմ ունեցող նախադպրոցականների վախերն առանձնանում են իրենց բարձր ինտենսիվությամբ, օբյեկտային և թեմատիկ անհստակությամբ, ծագման անորոշությամբ:

Իրականացված վիճակագրական հետազոտությունն ախտաբանական այս խմբի զարգացման առանձնահատկությունների և վախերի մակարդակի միջև ևս արձանագրել է հավաստի կապ (p=0,01):

Չորրորդ՝ **«Նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման ծրագրի արդյունավետության փորձարարական հիմնավորում»** գլխում ներկայացված են հետևյալ ենթագլուխները.

4.1 «Հետազոտվողների բնութագիրը և փորձարարական խմբերի քանակակազմը» ենթագլխում ներկայացվել են փորձարարական խմբերի ընդհանուր բնութագրերը և քանակակազմը: Ծրագրի արդյունավետությունը պարզելու նպատակով մեր կողմից ընտրվել և փորձարարական խմբերում ներգրավվել էին հիմնականում այն երեխաները, որոնց մոտ մեր կողմից իրականացված արձանագրող գիտափորձի ընթացքում բացահայտվել էր տագնապայնության և վախերի բարձր մակարդակ: Ձևավորող գիտափորձին մասնակցել են 3-6 տարեկան 75 երեխաներ: Գիտափորձն անցկացվել է երեք փորձարարական խմբերում, որոնցից մեկում ընդգրկված էին նորմալ զարգացում ունեցող 25 նախադպրոցական տարիքի երեխաներ, մյուսում՝ 25 թեթև

աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաներ, իսկ երրորդ խումբը կազմում էին աուտիզմ ունեցող 25 երեխաներ:

Յուրաքանչյուր խմբում ընդգրկված հետազոտվող երեխաներն ունեին նույն տարիքը և մտավոր զարգացման գրեթե նույն մակարդակը: Հետազոտվող 75 երեխաներից 30-ը աղջիկներ էին, 45-ը տղաներ:

Արձանագրող գիտափորձի արդյունքները վկայում են, որ փորձարարական խմբերում ընդգրկված երեխաների մոտ ըստ թեմատիկայի արդիական էին բժշկական միջամտության, ֆիզիկական վնասման, մահվան հետ կապված վախեր, ինչպես նաև վախեր, որոնք կապված են որոշակի իրավիճակների, տարածքների, մարդկանց հետ: Հետազոտվող խմբերում դրսևորվող վախերն ըստ թեմատիկայի ընդհանուր առմամբ բնորոշ էին նախադպրոցական տարիքին, սակայն դրանք կտրուկ տարբերվում էին իրենց դրսևորման ինտենսիվությամբ և ախտաբանական բաղադրիչով՝ գիտափորձում ընդգրկված նոզոլոգիական խմբերից յուրաքանչյուրում, և չէին ամփոփվում «տարիքային վախեր» հասկացության շրջանակում: Այսպես, օրինակ, եթե նորմալ զարգացում ունեցող երեխաների համար նախադպրոցական տարիքում արդիական էին մահվան վախը, վախերը հեքիաթների կամ մուլտֆիլմերի հերոսներից, մթությունից, մղձավանջներից, պատժվելուց, ապա մտավոր հետամնացություն ունեցող երեխաների խմբում առավել արտահայտված էին կտրուկ, անսպասելի ձայների, անծանոթների, բժշկական միջամտությունների հանդեպ դրսևորվող վախերը(աղ.1):

Աղյուսակ 1

Հետազոտվող խմբերում վախերի արտահայտման ցուցանիշները

N	Հետազոտ-վող Խմբեր	Ցուցա նիշներ	Վախերի քանակը					
			13-15		16-19		20-22	
			Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական
1.	Նորմալ զարգացում ունեցող երեխաներ	բաց.	5 (n=12)	6 (n=13)	7(n=12)	7 (n=13)	0 (n=12)	0 (n=13)
		%	41,7	46,1	58,3	53,9	0	0
2.	Թեթև մտավոր հետա-մնացություն ունեցող երեխաներ	բաց.	13(n=15)	8(n=10)	2 (n=15)	2 (n=10)	0(n=15)	0 (n=10)
		%	86,7	80	13,3	20	0	0
3.	Աուտիզմ ունեցող երեխաներ	բաց.	3 (n=18)	0 (n=7)	10 (n=18)	5 (n=7)	3(n=18)	2(n=7)
		%	16,7	0	55,5	71,4	27,8	28,6

4.2 «Փորձարարական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը»

ենթագլխում ներկայացվել են ծրագրի հիմնական կառուցվածքը, յուրահատկություններն ու ընդհանուր բովանդակությունը: Ներկայացված

ծրագրի համար հիմք են հանդիսացել հաջողված հոգեշտկողական ծրագրերի ընդհանուր սկզբունքները (Захаров А.И., Крюкова С.В., Слободяник Н.П, Лютова Е.К.,Монина Г.Б, Панфилова М.А, Хухлаева О.В և այլք), և մեր իրականացրած հետազոտության արձանագրող գիտափորձի արդյունքների վերլուծությունը: Ծրագիրը նախատեսված է ինչպես նորմալ զարգացում ունեցող, այնպես էլ հոգեկան զարգացման որոշակի խնդիրներ, մասնավորապես՝ թեթև մտավոր հետամնացություն և աուտիզմ ունեցող երեխաների վախերի հաղթահարման համար: Այն կազմված է բացատրական թերթիկից, վախերի հաղթահարմանն ուղղված 29 խաղերից, որոնք ներկայացված են ծրագրի համապատասխան փուլերում: Ծրագիրն իրականացվում է 3 հիմնական փուլերով՝

- կողմնորոշիչ փուլ
- վախերի արդիականացման փուլ
- հաղթահարման փուլ

Ծրագրի փուլային կիրառումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել վախերի հաղթահարմանն ուղղված աշխատանքները, հաշվի առնելով նորմալ զարգացում ունեցող և զարգացման որոշակի խնդիրներ ունեցող երեխաների վախերի հաղթահարման առանձնահատկությունները:

Ծրագրի կողմնորոշիչ փուլում իրականացվող աշխատանքներն ուղղված են երեխայի հետ հուզական կապի ձևավորմանն ու հաստատմանը, վստահելի հարաբերությունների և անմիջական մթնոլորտի ձևավորմանը:

Վախերի արդիականացման փուլում իրականացվող աշխատանքներն ուղղված են երեխաների կողմից իրենց վախերի արդիականացմանը, վախերի հետևանքով առաջացող լարվածության լիցքաթափմանը, դրանց արտահայտման հնարավորությունների ընդարձակմանն ու դրա համար անհրաժեշտ պայմանների ձևավորմանը:

Հաղթահարման փուլում իրականացվող աշխատանքներն ուղղված են արդեն արդիականացված վախերի հաղթահարմանը, դրանց նկատմամբ երեխայի վերաբերմունքի փոփոխմանը:

Ծրագրում ներկայացված խաղերը կարելի է իրականացնել ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների ընթացքում: Ներկայացված ծրագիրը հնարավորություն է տալիս վախերի հաղթահարմանն ուղղված աշխատանքներ կազմակերպել ինչպես տարիքային բնույթի վախերի, այնպես էլ վախերի այնպիսի ախտաբանական դրսևորումների դեպքում, ինչպիսիք են օրինակ ֆոբիաները, գերարժեքային բնույթ ունեցող վախերը՝ հաշվի առնելով հետազոտվող խմբերի յուրահատկությունները, երեխաների հոգեֆիզիկական զարգացման մակարդակը և նրանց իմացական, ֆիզիկական, հոգեբանական պոտենցիալ հնարավորությունները:

4.3.«Առաջարկվող ծրագրի արդյունավետության փորձարարական հիմնավորումը» ենթագլխում ներկայացվել է վախերի հաղթահարման ծրագրի փորձարարական հիմնավորումը՝ նորմալ զարգացում և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների վախերի հաղթահարման արդյունավետության տեսանկյունից:

2009–2011թթ. ընթացքում շուրջ 120 երեխայի հետ անցկացված

պիլոտաժային հետազոտությունը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարմանն ուղղված ծրագրերն արդյունավետորեն են գործում նորմայում, սակայն դրանք արդյունավետ չեն զարգացման խանգարումներ ունեցող նախադպրոցականների վախերի հաղթահարման նպատակով կիրառելիս: Նորմալ զարգացում ունեցող երեխաների վախերի հաղթահարմանն ուղղված ծրագրերը, դրանցում ներառված հոգեբանական տեխնիկաները, խաղերն ու վարժությունները կոնկրետ պահանջներ են ներկայացնում երեխաների մտածողությանը, երևակայությանը, խոսքային զարգացմանը, գրաֆիկական հմտությունների զարգացմանը, իսկ զարգացման խանգարումների առկայության դեպքում վերոնշյալ գործընթացների զարգացման մակարդակը լուրջ խոչընդոտ է դառնում համապատասխան ծրագրերի արդյունավետ կիրառման համար:Այս երնթագլխի երեք բաժիններն արտացոլում են «Նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման ծրագրի»կիրառման առանձնահատկություններն ու արդյունավետության ուսումնասիրության արդյունքները՝ գիտափորձում ընդգրկված երեք խմբերից յուրաքանչյուրում:

4.3.1 «Նորմալ զարգացում ունեցող երեխաների խմբում «Նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման ծրագրի» արդյունավետության ուսումնասիրություն» ենթագլխում ներկայացվել են նորմալ զարգացում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի հաղթահարման նպատակով իրականացված աշխատանքների արդյունքները:

Իրականացված աշխատանքները ցույց տվեցին, որ ծրագրում առաջարկվող կողմնորոշիչ և վախերի արդիականացման փուլերը նորմալ զարգացում ունեցող երեխաների հետ աշխատանքում տևեցին համեմատաբար ավելի կարճ, քան թեթև մտավոր հետամնացություն ունեցող և աուտիզմ ունեցող երեխաներից կազմված փորձարարական խմբերում: Սակայն կարևոր ենք համարում նշել նաև, որ վախերի հաղթահարման փուլը տևեց ավելի երկար, քան մտավոր հետամնացություն ունեցող երեխաներից կազմված փորձարարական խմբում:

Գիտափորձի սկզբից վեց ամիս անց վախերի քանակական ցուցանիշները դեռևս թույլ չէին տալիս մեզ սահմանել դրանք այլ կերպ, քան վախերի բարձր մակարդակ, քանզի կոնկրետ վախեր հաղթահարվել էին, սակայն վախերի ընդհանուր քանակը շարունակում էր մնալ վախերի բարձր մակարդակի շրջանակներում՝ըստ Ա. Ի. Զախարովի՝ տարիքին բնորոշ վախերի սանդղակի: Այնուհանդերձ, նշանակալի փոփոխություններ գրանցվել էին ինչպես վախերի քանակական, այնպես էլ որակական ցուցանիշներում: Այդ փոփոխություններն արտահայտվում էին ինչպես առանձին վախերի հաղթահարմամբ, այնպես էլ ընդհանուր առմամբ վախերի արտահայտման ինտենսիվությամբ, դրանց դրսևորման հաճախականությամբ, շրջապատող աշխարհի հետ երեխաների փոխհարաբերությունների վրա դրանց ունեցած ազդեցությամբ:

Եթե գիտափորձից վեց ամիս անց 25 հետազոտվողներից և ոչ մեկի վախերի մակարդակը դեռևս տարիքային նորմայի սահմաններում չէր, ապա գիտափորձի ավարտին տարիքային նորմայի սահմաններում կամ վախերի միջին մակարդակ ունեին 18 (72%) երեխա, 7 (28%) երեխաների վախերն ունեին ցածր մակարդակ:

Անդրադառնալով տագնապայնության արտահայտման մակարդակներին կարող ենք նշել, որ եթե մինչ գիտափորձը տագնապայնության բարձր մակարդակ ուներ մեր հետազոտած նորմալ զարգացում ունեցող 25 երեխա, ապա գիտափորձից վեց ամիս անց տագնապայնությունը նվազել էր 10 (40%) երեխայի մոտ, իսկ գիտափորձի ավարտին հետազոտվող երեխաներից ոչ մեկը տագնապայնության բարձր մակարդակ չուներ: Տագնապայնության միջին մակարդակ (տագնապայնության ինդեքսը տատանվում էր 42,8%-35,7%-ի սահմաններում) ուներ նրանցից 13-ը (52%), իսկ 12-ի (48%) տագնապայնության մակարդակը ցածր էր: Այս խմբում տագնապայնության նվազման և վախերի հաղթահարման հարցում՝ կիրառվող ծրագրի ազդեցության հավաստիության մասին է վկայում նաև իրականացված վիճակագրական հետազոտության արձանագրած p=0,01 ցուցանիշը:

4.3.2 «Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների խմբում «Նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման ծրագրի» արդյունավետության ուսումնասիրություն» ենթագլխում ներկայացվել են գիտափորձում ընդգրկված թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի հաղթահարման նպատակով իրականացված աշխատանքների արդյունքները: Գիտափորձի սկզբում հետազոտվող 25 երեխաներն ունեին վախերի բարձր մակարդակ, մինչդեռ գիտափորձի ավարտին հետազոտվող ոչ մի երեխայի մոտ վախերի բարձր մակարդակ չէր դիտվում: Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների խմբում գիտափորձից վեց ամիս անց վախերի միջին մակարդակ ուներ 3 երեխա (12%), իսկ գիտափորձի ավարտին վախերի միջին մակարդակ ունեցող երեխաների թիվը զգալիորեն մեծ էր՝17 երեխա (68%), վախերի ցածր մակարդակ ունեցողների թիվն 8-ն էր (32%):

Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների փորձարարական խմբում վախերի հաղթահարմանն ուղղված՝ մեր կողմից առաջարկված ծրագիրը նպաստեց տարբեր նյութերի, ձայների, մթության, փակ տարածության վախերի, կենդանիների հանդեպ վախերի հաղթահարմանը: Հարկ ենք համարում նշել, որ այս խմբում ևս փոփոխությունները վերաբերում էին ոչ միայն վախերի քանակական բնութագրերին, այլև դրանց բնույթի, ինտենսիվության, արտահայտման ձևերի փոփոխմանը:

Անդրադառնալով տագնապայնության արտահայտման մակարդակներին կարող ենք նշել, որ եթե մինչ գիտափորձը տագնապայնության բարձր մակարդակ դիտվել էր հետազոտված մտավոր հետամնացություն ունեցող 25 երեխաների մոտ, ապա վեց ամիս անց այդ երեխաների թիվը նվազել էր 8-ով (32%), իսկ գիտափորձի ավարտին հետազոտվող ոչ մի երեխա տագնապայնության բարձր մակարդակ չուներ: Գիտափորձի ավարտին տագնապայնության միջին մակարդակ ուներ նրանցից 10-ը (40%), իսկ 15-ն (60%) ուներ տագնապայնության ցածր մակարդակ:

Ինչպես վախերի հաղթահարման, այնպես էլ տագնապայնության նվազման հավաստիության աստիճանն այս խմբում չէր գերազանցում սահմանված նշանակալիության ցուցանիշը (p=0,01):

4.3.3 «Աուտիզմ ունեցող երեխաների խմբում «Նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման ծրագրի» արդյունավետության ուսումնասիրություն» ենթագլխում ներկայացվել են գիտափորձում ընդգրկված աուտիզմ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի հաղթահարման նպատակով իրականացված աշխատանքների արդյունքները: Գիտափորձի սկզբում հետազոտվող 25 երեխաներն ունեին վախերի բարձր մակարդակ, 6 ամիս անց վախերը դեռևս շարունակում էին մնալ բարձր մակարդակի սահմաններում, թեև քանակական ցուցանիշներում նշանակալի փոփոխություններ այնուամենայնիվ գրանցվել էին: Նույնը կարող ենք ասել նաև վախերի որակական բնութագրերի մասին: Այս խմբում ևս զգալիորեն փոփոխվել էր դրանց արտահայտման ինտենսիվությունը, դրսևորման ձևերը, շրջապատող աշխարհի հետ երեխաների փոխհարաբերությունների վրա դրանց ունեցած ազդեցությունը: Գիտափորձի ավարտին փորձարարական այս խմբում գերակշռում էին վախերի միջին մակարդակ ունեցող երեխաները: Վախերի ցածր մակարդակ ունեցող երեխաների թիվը 3-ն է (12%) էր, մինչդեռ վախերի միջին մակարդակ ունեցող երեխաների թիվը զգալիորեն մեծ էր՝ 22 (88%), հետազոտվող ոչ մի երեխա վախերի բարձր մակարդակ չուներ:

Ինչ վերաբերում է տագնապայնության արտահայտման մակարդակին, ապա կարող ենք նշել, որ եթե մինչ գիտափորձը տագնապայնության բարձր մակարդակ ունեին մեր հետազոտած աուտիզմ ունեցող 25 երեխաները, ապա գիտափորձից վեց ամիս անց 18 երեխա (72%) դեռևս ուներ տագնապայնության բարձր մակարդակ, իսկ գիտափորձի ավարտին հետազոտվող ոչ մի երեխայի մոտ տագնապայնության բարձր մակարդակ չէր դիտվում: Տագնապայնության միջին մակարդակ ուներ նրանցից 20-ը (80%), իսկ 5-ի մոտ (20%) դիտվում էր տագնապայնության ցածր մակարդակ:

Ինչպես վախերի հաղթահարման, այնպես էլ տագնապայնության նվազման հավաստիության աստիճանն այս խմբում ևս չէր գերազանցում սահմանված նշանակալիության ցուցանիշը (p=0,01):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հոգեբանական տարբեր դպրոցներ (հոգեդինամիկ, կոգնիտիվ, բիհևիորիստական և այլ), առանձնացնելով վախերի առաջացման օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներ, դիտարկում են դրանք քարացած վիճակում, մինչդեռ կարևոր է համադրել այդ գործոններն ու դիտարկել իրենց դինամիկայում:
2. Նորմալ զարգացում ունեցող երեխաների համար մշակված ախտորոշիչ մեթոդները զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքի մեջ մեխանիկորեն տեղափոխելն անարդյունավետ է և անհրաժեշտ է դրանք լրացնել օժանդակ ախտորոշիչ մեթոդներով:
3. Նորմալ զարգացում ունեցող վախերի հաղթահարումը տևում է ավելի երկար, քան դրանց արդիականացումը և հիմնվում է վախերի հաղթահարման մոտիվացիայի վրա:
4. Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների

հոգեկան գործընթացների զարգացման անբավարարությունը պահանջում է վախերի արդիականացման աշխատանքներն իրականացնել այդ գործընթացների հնարավորությունները հաշվի առնող խաղային մեթոդների կիրառմամբ:

5. Աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքներում անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ հատկացնել կողմնորոշիչ փուլին, ի նկատի ունենալով վերջիններիս հետ հուզական կապի հաստատման դժվարությունները:

6. «Նախադպրոցական տարիքում վախերի հաղթահարման ծրագրի» փուլային կառուցվածքը հնարավորություն է տալիս տարբերակելու վախի հոգեթերապիայի մեթոդաբանական մոտեցումները՝ նորմայում և ախտաբանության մեջ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլվում է հեղինակի հրապարակած հետևյալ **աշխատանքներում.**

1. Ա.Մանուկյան «Հոգեկան առողջությանը միտված դասեր հանրակրթական դպրոցում», «Մխիթար Գոշ» Գիտամեթոդական հանդես- «Սիմ» տպագրատուն,2013թ.,էջ 56-58:

2. Ա.Մանուկյան, Վ.Միքայելյան «Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրություն», «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես.-Երևան 2014, էջ 85-90:

3. Ա.Մանուկյան «Վաղ մանկական աուտիզմ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի դրսևորման առանձնահատկությունները», «Մանկավարժական միտք հանդես» 1-2,Երևան 2014, Զանգակ հրատ., էջ 246-251:

4. Սվաջյան Ա.Հ., Մանուկյան Ա.Տ. «Աուտիզմ ունեցող երեխաներին հանրակրթության մեջ ներառման հիմնահարցեր»: Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Հատուկ կրթության հիմնախնդիրներ» գիտամեթոդական հանդես N3, 2015,Երևան,էջ 119-124:

5. А.Манукян,,Роль игр-драматизаций в преодолении страхов в дошкольном и младшем школьном возрасте”. ԵՊՀ 95-ամյակին և ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու:Երևան, ԵՊՀ հրատ.,2014,էջ 352-354:

6. А. Т. Манукян,,Изучение эффективности программы «Преодоление страхов в дошкольном возрасте» в работе с детьми с аутизмом”. Материалы XVI Международной научно-практической конференции студентов, аспирантов и молодых ученых. Пермь,2013,стр.558-561.

АЛИНА ТИГРАНОВНА МАНУКЯН

ПРЕОДОЛЕНИЕ СТРАХОВ В ДОШКОЛЬНОМ ВОЗРАСТЕ В НОРМЕ И В ПАТОЛОГИИ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.04-,,Медицинская психология”

Защита диссертации состоится 10 ноября 2016г. в 15.30 часов на заседании специализированного совета 028 «Терапия» ВАК РА при Ереванском государственном университете им. М.Гераци (0025, Ереван, ул.Корюна 2)

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Актуальность диссертационного исследования заключается в необходимости формирования нового психотерапевтического подхода к решению психологических проблем, имеющих место как в жизни детей с нормальным регистром развития, так и в случаях детей, имеющих различные проблемы развития. Нарушения развития отражаются преимущественно в эмоциональной сфере ребенка, в частности, эти нарушения ясно прослеживаются в своеобразии и специфике переживания страхов. У детей с нарушениями развития, проявления и переживания страхов, свойственных возрастному регистру отличаются как по шкале интенсивности, так и в контексте их преодоления. Это обстоятельство, к сожалению, не всегда учитывается при организации и проведении психокоррекционной работы по преодолению страхов с детьми, имеющими нарушения в развитии. В такой ситуации, вне учета этой специфики, вполне естественно предположить, что психологическая работа с детьми с нарушениями развития не будет прогнозируемой. Актуальность исследования наглядно отражается в сфере инклюзивного образования. Инклюзивная система образования ставит перед психологами новые задачи, в частности связанные с формированием новых моделей психотерапевтической работы со страхами, присущими детскому возрасту. Проблема формирования новых подходов имеет свои особенности как в случаях нормального развития, так и в случаях наличия определенных отклонений развития. Учитывая вышеизложенное, мы считаем актуальным формирование оптимальной программы преодоления страхов у детей, как не имеющих отклонений, так и у детей, имеющих определенные проблемы развития (умственная отсталость, аутизм). Заявленная тема исследования имеет теоретическое и практическое значение.

Цель исследования: выявить особенности страхов как у детей с нормальным психическим развитием, так и у детей с умственной отсталостью и аутизмом, и разработать программу психотерапевтической помощи.

Задачи исследования:

1. Изучить и проанализировать специальную научную литературу и современные подходы относительно заявленной проблемы.
2. Выявить особенности протекания страхов в трех исследуемых группах.
3. Изучить и проанализировать отношение родителей к страхам детей

дошкольного возраста, выявить степень их компетентности в этой области.

4. Подготовить психотерапевтическую программу работы со страхами с детьми дошкольного возраста как с нормальным регистром развития, так и имеющими отклонения в развитии и экспериментально обосновать ее эффективность.

Научная новизна исследования может быть представлена в следующих положениях:

1. Впервые предпринята попытка сравнительного анализа особенностей протекания страхов у детей с нормальным регистром развития, детей с умственной отсталостью и детей с аутизмом в контексте их поляризации.
2. На основании существующих классификаций детских страхов предпринята попытка формирования рабочей классификации страхов.
3. Разработана и апробирована авторская психотерапевтическая программа по преодолению страхов у детей дошкольного возраста.

Теоретическое значение исследования состоит в выявлении особенностей страхов у детей дошкольного возраста с нормальным регистром развития и с нарушениями развития в контексте их интенсивности, патологического компонента, объекта, происхождения и тематики, а также в обосновании особенностей преодоления страхов у детей перечисленных групп. Материалы диссертации дополняют специальную психологию и педагогику теоретическими данными и результатами опытной апробации относительно современных подходов и методов преодоления детских страхов.

Практическое значение исследования состоит в разработке новой программы психотерапевтической помощи в работе с детскими страхами в норме и патологии.

Результаты исследования свидетельствуют о том, что особенности протекания страхов у детей дошкольного возраста с нормальным регистром развития, с умственной отсталостью и аутизмом требуют дифференцированного подхода в процессе психотерапевтического вмешательства. В частности, эти особенности касаются генеза страхов, патологического компонента, интенсивности протекания, тематик и объектов страха. Преодоление страхов у детей с нормальным развитием занимает более длительное время, чем процесс актуализации страхов и зависит от мотивации. Процесс преодоления страхов у детей с аутизмом требует больше времени для выявления и определения объектов и тематики страха. Этот факт обусловлен известными сложностями в установлении эмоциональной связи с аутичными детьми.

Несколько иная картина вырисовывается при работе с детьми с умственной отсталостью. На этапе актуализации страхов, недостаточность развития психических процессов требует использование игровых методов, учитывающих степень развития этих процессов.

Поэтапная структура предлагаемой нами программы учитывает особенности страхов как у детей с нормальным развитием, так и у детей с нарушениями развития. Этот подход позволяет дифференцировать методологические принципы психотерапевтической работы с детьми в норме и патологии.

ALINA TIGRAN MANUKYAN

OVERCOMING OF FEARS AT PRE-SCHOOLS AGE IN NORMAL AND PATHOLOGICAL CONDITIONS

PHD Thesis in Psychological Sciences, specialty 19.00.04 - Medical Psychology

The thesis will be defended on the 10 November of 2016, at 15.30, at the Yerevan State Medical University after M.Heratsi, at the session of the Professional Council 028 of the Higher Assertion Committee of the Republic of Armenia (2, Koryun str., Yerevan 0025)

Summary

The relevance of the research: The actuality of the research rests in the necessity to form a new psychotherapeutic approach to the resolution of psychological problems of children both with normal development and with various issues of development.

Development disorders appear in children's emotional system, as well; consequently, even fears characteristic to a given age are manifested individually and in various manners, both in the sense of intensity and nature, and in terms of overcoming those fears.

Nevertheless, relevant specialists do not always consider this fact when dealing with the fears of children with development impairments, thus resulting in low efficiency of delivered care.

Therefore, development of various methods and means for consideration of fear peculiarities of children with various development disorders, as well as experimental justification of the efficiency of those methods is actual today, and represents an essential theoretical and practical value.

The aime of the research is to reveal fear peculiarities of children with normal development, mental retardation and autism, and develop a programme on overcoming of fears.

Objectives of the research:

- Study and analyse current approaches available in professional literature and in practice on the major issues of the research.
- Reveal fear peculiarities of the three target groups of the research.
- Study and analyse the attitude of preschool age children's parents towards their children's fears; reveal the level of awareness of parents on manifestation and overcoming of fears.
- Develop a programme on overcoming of fears for preschool age

children with both normal and disturbed development and to experimentally prove its efficiency.

The Scientific Novelty of the Research

For the first time, there is an attempt to study and implement a comparative analysis of peculiarities of fears of preschool age children with normal and disturbed development, and autism, in terms of their polarity.

The research pictures a complete image of classification of children's fears and introduces a working classification based on the available ones.

An author plan on overcoming of fears at preschool age was developed and tested.

The Theoretical Value of the Thesis: the theoretical generalizations and the results of the scientific experiment conducted during the research allow revealing the peculiarities of fears of children with normal and disturbed development, in terms of intensity, pathological component, subject matter, availability of the object and the source, as well as justifying the characteristic features of fear overcoming processes.

The Practical Value of the Thesis: "A Programme on Overcoming of Fears at the Preschool Age" was developed. It is envisaged for children with both normal and disturbed development.

The research results revealed that fears of pre-school children with normal development, mental disorders and autism have their own pecularities in terms of origin, pathological component, intensity, subject matter and objects of fear. Those pecularities require differenciated approach in the process of overcoming fears, as well.

Childern with normal development need more time for overcoming their fears rather then for revealing them, which basically depends on their motivation to do so. While in the case of children with autism, specilists need to focus more on revealing the children's fears considering the difficulties of establishing emotional contact with the latter.

Depending on the poor mental and emotional development it is required to apply corresponding game methods in the process of revealing fears.

The phase-based structure of the proposed program considers the above mentioned characteristics of fears experienced by childern both with normal and disturbed development. The program allows differentiating methodological approaches of fear psychotherapy in normal and disturbed mental development.